Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
մարտի 6-ի N 255-Ա որոշման

ՆԱԽԱՌԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՌԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Մրցույթի նախառակավորման մասնակիցների նկատմամբ չափանիշներ՝

1) Մրցույթի նախառակավորման փուլի մասնակիցը՝

ա. պետք է ունենա առնվազն 3 տարվա առողջապահական կազմակերպության կառավարման գործունեություն (փորձ), ընդ որում՝ վերջինիս տարեկան շրջանառությունն առնվազն պետք է լինի «Ստեփանավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տարեկան շրջանառության չափով,

բ. վերջին երեք տարիների համար չունենա վարկային ժամկետանց պարտավորություն,

գ. պետք է ունենա տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

2) Մրցույթի նախառակավորման փուլին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

ա. որոնց գործադիր մարմնի ներկայացուցչի (անհատ ձեռնարկատիրոջ) վերաբերյալ առկա է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճիռ կամ դատավճիռ,

բ. դատական կարգով ճանաչվել են սնանկ,

գ. ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ,

դ. գործադիր մարմնի ներկայացուցիչը (անհատ ձեռնարկատերը) նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության

կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

3) Մրցույթի նախաորակավորման փուլին չեն կարող մասնակցել միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձին (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունները:

2. Մրցույթի նախաորակավորման գնահատման կարգ՝

1) Նախաորակավորման հայտարարությամբ սահմանված կարգով գնահատվում է մասնակցի հայտը՝ մրցույթին մասնակցելու իրավունքը և որակավորումը, կազմվում է նախաորակավորված մասնակիցների ցուցակ.

2) մրցութային գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախաորակավորված մասնակիցները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ